ՏԵՂԵԿԱՆՔ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2020 թվականի հուլիսի 16-ին

ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ 4

ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԸ ԵՎ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԸ

Հոդված 15. Մասնավոր Հեռարձակողների հիմնադրումը

1. Հեռարձակողների հիմնադրման (ստեղծման) ժամանակ կամ դրանից հետո օտարերկրյա կապիտալի մասնակցության բաժինը չպետք է տվյալ կազմակերպության որոշումների ընդունման համար անհրաժեշտ բաժնեմասերի հիսուն տոկոսին հավասար կամ հիսուն տոկոսից ավելի լինի, եթե այլ բան նախատեսված չէ միջազգային պայմանագրով:

2. Մասնավոր Հեռարձակողների հիմնադիրներ (մասնակիցներ) չեն կարող լինել՝

1) Հանրապետության նախագահը և նրան փոխկապակցված անձինք.

2) պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինները.

3) Կառավարության անդամները և նրանց փոխկապակցված անձինք.

4) Ազգային ժողովի պատգամավորները և նրանց փոխկապակցված անձինք.

5) դատավորները և նրանց փոխկապակցված անձինք.

6) համայնքների ղեկավարները և նրանց փոխկապակցված անձինք.

7) կարգավորող պետական մարմնի անդամները, աշխատակիցները և նրանց փոխկապակցված անձինք.

~~8) կուսակցությունները, այդ թվում՝ կուսակցության ղեկավար մարմնի անդամները և նրանց փոխկապակցված անձինք.~~

~~9) կուսակցությունների հիմնադրամները.~~

10) կրոնական կազմակերպությունները.

11) 18 տարին չլրացած քաղաքացիները: